

Հարցազրոյց՝ Ստեփանակերտի ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ՀԵՏ

Մէկ տարի առաջ, հոկտեմբերի կէսին, թշնամին վերջին անգամ «Կրատ» տիպի հրթիռներով ուժակոծեց Ստեփանակերտը: Ղարաբաղցի մարտիկները չէզոքացուցին այդ կրակակէտը եւս: Ատկէ ետք թշնամին դործի լծեց հեռաւոր թնդանօթներն ու օդուժը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մայրաքաղաքին վրայ պատերազմական դանազան տեսակի օդանաւեր դանազան ծանրութեան ու ձեւի ոււմբեր նետեցին: Տարբեր տեղերէ խոցուեցաւ ու աւերուեցաւ Ստեփանակերտը: Բնակիչները աւելի քան 2,5 տարի մնացին նկուղներու մէջ: Մայրաքաղաքին մէջ հերոսութիւնը իր լրումին հասաւ, երբ ստեփանակերտցին իր ծոցին մէջ ծուարեց չահումեանցին, մարտակերտցին, ասկերանցին, հաղրութցին:

Ինչպէ՞ս տեղի ունեցաւ այս բոլորը: Այս ուղղութեամբ, «Հայուր»-ի թղթակից Շուշանիկ Աբրահամեանի հարցումներուն կը պատասխանէ Ստեփանակերտի վարչակարգի ղեկավար Եուրի Ներսիսեան:



– Պարոն Ներսիսեան, ինչպէ՞ս կարողացաւ այսֆան կարն ժամանակի ընթացքին վերականգնել քաղաքի տեսքը: Մեր առջեւը ձմեռ է: Ինչպէ՞ս է շինարարական – վերականգնողական աշխատանքներու վիճակը: Ամէնակարեւորը բնակարաններու հարցն է:

– Ստեփանակերտի մէջ ուժակոծութեան ենթարկուած են աւելի քան 270 պետական շէնքեր, որոնցմէ 235ը՝ մեր բնակարանային ֆոնտէն: Մասնակի եւ լրիւ աւերուած են 708 անհատական տուներ: Վերականգնումի աշխատանքներու համար ծախսուած է ԼՂՀն իշխանութիւններու կողմէ տրամադրուած 28 միլիոն ուրբլին: Հիմնական վերանորոգումներու մօտ 80%ը կատարուած են: Անձնական տուններու վերականգնումին համար տրամադրուած է 60 միլիոն ուրբլի վարկ մը, գոր պայմանագրով կու տանք բնակիչներուն: Այդ վարկը պէտք է վերադարձնեն 20 տարւան ընթացքին: Այժմ առարկայական պատճառներով

Հարցազրոյց՝ Ստեփանակերտի ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ՀԵՏ

(Շար. 2րդ էջէն)

ստեփանակերտցիւն մէկ պարկ ցորենը ալիւր դարձնելու համար 15 - 20 ֆլմ. հեռու չ'երթար, երբ փոխադրամիջոց ալ չկայ, տեղւոյն վրայ ալիւր կ'ունենայ: Յայտնի է, որ մեր տուած 7 ֆիլոկրամ ալիւրը զինք նոյնիսկ մէկ շաբաթ չի բաւարարեր:

- Ստեփանակերտը բարեկամացած ֆաղաֆ չէ՞ արտերկրի որեւէ ֆաղաֆիֆ հետ: Բարեկամացած ֆաղաֆները իրարու շատ կ'օգնեն:

- Մինչեւ այսօր, յստակօրէն Ստեփանակերտ ֆաղաֆի անունով ոչ մէկ օգնութիւն եկած է: Արցախ ուղարկուածի համար բոլորին շնորհակալութիւն:

Նախ՝ սկիզբը որոշեցինք Երեւանի հետ բարեկամանալ:

Նախկին ֆաղաֆապետին հետ նստեցանք, շարք մը միջոցառումներու ձեռնարկեցինք, բայց հետեւողական չգտնուեցանք: Պատերազմական կացութիւնը սրեցաւ, իրադրութիւնը շատ փոխուեցաւ, փոխուեցաւ նաեւ Երեւանի ֆաղաֆապետը եւ այդպէս ալ երկկողմանի բարեկամութիւն չստեղծուեցաւ: Նոր ֆաղաֆապետին հետ կապի մէջ չենք մտած:

Նամակ - հրաւեր ստացած ենք Ֆրանսայի Քլամար ֆաղաֆէն: Մեր հերթին նամակ ուղարկած ենք Կիպրոսի Նիկոսիա ֆաղաֆը, բարեկամութիւն հաստատելու համար: Սակայն այս գծով շօշափելի արդիւնքներ չկան տակաւին: